Հաստատված է:

Երևանի Մ. Խորենացու անվան
Հ. 143 հիմնական դպրոցի
Տնօրեն՝ Կ. Կոստանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Մ.Խորենացու անվան համար 143 հիմնական դպրոց
3_րդ գ դասարան 2023-2024 ուսումնական տարի

Դասվար՝ Ա. Նազարյան

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) 2023 -2024 ուստարում

III գ դասարան - 24աշակերտ՝ 10 տղա, 14 աղջիկ։Երեխաներն

աշխույժ են, պարտաճանաչ և հետաքրքրասեր։

Որոշ աշակերտներ հաճախում են արտադպրոցական խմբակներ։

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետևել աշակերտների անձնական հիգիենային և օրվա ռեժիմի պահպանմանը:

Դաստիարակել հայրենասիրություն ճշմարտախոսություն, ազնվություն և բարություն:

Խրախուսել երեխաների ստեղծագործական միտքը և աջակցել: Ձևավորել միմյանց նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք, ստեղծել ընկերական, դրական, ջերմ մթնոլորտ:

Երեխաների մեջ սերմանել ընկերասիրություն և փոխօգնության պատասխանատվություն:

Սովորեցնել լսել և հարգել ուսուցչի, ծնողի, մեծի խոսքը:

Հետևել տնային հանձնարարությունների ճիշտ և ժամանակին կատարմանը:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Կազմակերպել զրույցներ հոգևոր թեմաներով:

Կարդալ առակներ <<Մանկական աստվածաշունչ>> գրքից:

Դիտել մուլտեր և ֆիլմեր հոգևոր թեմաներով:

Աշակերտներին դաստիարակել բարության, համեստության և հանդուրժողականության սկզբմունքով:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Հաճախել թատերական ներկայացումների, ցուցահանդեսների, դիտել մանկական ֆիլմեր, կազմակերպել էքսկուրսիաներ, ցերեկույթներ , ձեռագրերի և նկարների ցուցահանդեսներ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Աշակերտներին ծանոթացնել ՀՀ պետական խորհրդանիշներին՝ դրոշ, օրհներգ, զինանշան :

Խոսել բանակի և քաջ հերոսների մասին: Դաստիարակել ազնիվ, հայրենասեր և հայրենիքին նվիրված քաղաքացիներ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն հետևել օրվա ռեժիմին և անձնական հիգիենային։ Խաղերի միջոցով ձևավորել տոկունություն, ամուր կամք, համարձակություն, խիզախություն, ճշմարտություն և կարգապահություն։

3.5 Աշխատանքային դաստիարակություն Դաստիարակել աշխատասիրություն։ Թեթև հանձնարարությունների միջոցով հասնել այն բանին, որ երեխան խնամի սենյակային բույսերը, մաքուր պահի իր շրջապատը։

3.6 Բնապահպանական դաստիարակություն Սերմանել սեր և ջերմություն դեպի բնությունը։ Հետևել նրանց կողմից բնության տարրերի՝ ծառերի, ծաղիկների պահպանմանը : Արթնացնել սեր կենդանիների և թռչունների հանդեպ։
Օգնել անօթևան կենդանիներին։

4.Դպրոց - ընտանիք կապը Սերտ կապ հաստատել ընտանիքների և դպրոցի միջև։ Ներգրավել դպրոցական աշխատանքներին։ Հաճախ զրուցել ծնողների, նրանց հուզող հարցերի մասին : Օգնել ստեղծել ծնողական ամուր կոլեկտիվ։ Կարևորել աշակերտ-ծնող- ուսուցիչ կապը և համատեղ աշխատանքներ կատարել : Հրավիրել ծնողական ժողով տարեկան առնվազն 4 անգամ, կազմակերպել աշխատանքներ ԾԽ-կազմի հետ։

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսումնական շաբաթներ	Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
Ի շաբաթ	<<Գիտելիքի և դպրության օր>>:	01. 09	Դասվար
	Կազմակերպչական հարցեր (ծանոթություն նոր աշակերտների հետ,		
	դասագրքերի բաշխում, ծանոթացնել դպրոցի կանոններին):		

	Ծնողական ժողով:		
II շաբաթ		04. 09-08. 09	Դասվար
	Օրվա ռեժիմը: Առողջ սննդակարգ:		
III շաբաթ	Անվտանգ երթևեկության կանոնները:	11-15. 09	Դասվար
	<<Երթևեկության կանոններ>> տեսաֆիլմի դիտում:		
IV շաբաթ	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	18 -22. 09	Դասվար
	Սեպտեմբերի 21-ը Անկախության օրն է:		
V շաբաթ	<<Իմ խաղաղ տունն ու ընտանիքը>>	25-29. 09	Դասվար
	<<Ես կարող եմ. . . >>		
	1.<<Քո առողջությունը. անձնական հիգիենա>> 2.<<Կրակի հետ չի կարելի խաղալ>>		
VI շաբաթ	Ուսուցի՛չ իմ թանկագին: Երգի ուսուցում:	02-06. 10	Դասվար
	Բացիկի ձևավորում:		
VII շաբաթ	Բարեկիրթ շփում, հաղորդակցում:	09-13. 10	Դասվար
	ՈՒսուցողական խաղ՝ <<Ճանապարհային երթևեկություն>>:	16-20.10	Դասվար
	Այցելություն թատրոն		
VIII շաբաթ	Հերթապահության կազմակերպում: Ծաղիկների խնամք:	30-03. 10	Դասվար
	Զրույց <<Աշնանային գույներ>> թեմայով:		

IX շաբաթ	Զրույց <<Մեր ընտանիքը>> թեմայով:	06. 10. 11	Դասվար
	Ծնող-ուսուցիչ-աշակերտ կապի պահպանում:		
X շաբաթ	ՀՀ խորհրդանիշները:	13-17. 11	Դասվար
	Զրույց <<Ես հայ եմ>>: Իմ իրավունքներն ու		
	պարտականությունները:		
XI շաբաթ	<<Ինչպես խուսափել վիրուսից>>: <<Ինչու է անհրաժեշտ օդափոխել սենյակը>>	20.-24. 11	Դասվար
	Զրույց առողջական խնդիրների մասին:		
XII շաբաթ	Հետևել գրենական պրտույքների	27-01. 12	Դասվար
	սանիտարական վիճակին:		
	Աշխատանք թույլ առաջադիմությամբ		
	աշակերտների հետ:		
XIII շաբաթ	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր:	04-08. 12	Դասվար
	Լռության րոպե:		
XIV շաբաթ	<< Դաստիարակություն առանց բռնության>>	11-15. 12	Դասվար
	զրույց:		
	<< Ծնողի դերը դաստիարակության գործում>>:		
	Ծնողական ժողով:		
XV շաբաթ	Կախարդական ձմեռ:	18-22. 12	Դասվար
	Նոր տարվա տոնակատարության նախապատրաստում: Դիմակահանդեսի կազմակերպում:		

XVI շաբաթ	Դասագրքերի և գրենական պիտույքների վիճակի ստուգում: Դասարանական հերթապահության կազմակերպում:	08-12. 01	
XVII շաբաթ	<<Իրավունք և պարտականություն>> <<Ձմեռային խաղեր և ավանդական սովորույթներ>>	15-19. 01	Դասվար
XVIII շաբաթ	Հայոց բանակի տոն: << Ես զինվորն եմ իմ հայրենիքի>>: Երգի ուսուցում:	22-26. 01	Դասվար
XIX շաբաթ	Մուլտֆիլմի դիտում: Զրույց <<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>>	29-02.02	Դասվար
XX շաբաթ	Համացանցի և հեռուստացույցի դերը երեխայի դաստիրակության գործում (դրական և բացասական):	05-09. 02	Դասվար
	Ծնողական ժողով:		
XXI շաբաթ	Հերթապահություն դասասենյակում:	12-16. 02	Դասվար
	Հետևել գրենական պիտույքների հիգիենային:		
	Աշխատանք ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ		
XXII շաբաթ	Աշխարհում շատ կան հետաքրքիր մասնագիտություններ Գիրք նվիրելու օր	19-23. 02	Դասվար
	<<Ընտանիքում յուրաքանչյուրն իր գործն ունի>> թեմայով զրույց:		
XXIII շաբաթ	Զրույց <<Մենք բնության մասնիկն ենք>>:	26-01. 03	Դասվար
	Սենյակային բույսերի խնամք:		
XXIV շաբաթ	<<Դռները բացե՛ք, գարուն է գալիս>>:	04-08. 03	Դասվար
	Մայրիկների տոն: Բացիկի պատրաստում		
XXV շաբաթ	Որտեղ կարելի է խաղալ: Խաղի կարևորությունը աշակերտի կյանքում:	11-15. 03	Դասվար
	Իմ մտերիմ ընկերը: Ինչպես օգնել մտերիմ ընկերոջը:		
XXVI շաբաթ	<<Մեր շրջապատի թռչունները>>	18-22. 04	Դասվար
XXVII շաբաթ	<<Ես իմ մայրիկին շատ եմ սիրում>> զրույց: <<Իմ մայրիկ>> երգի ուսուցում: Մայրության և գեղեցկության տոն	01-05.04	

XXVIII շաբաթ	Էքսկուրսիա գարնանային այգի:	08-12. 04	Դասվար
	Պահպանենք բնությունը, պահպանենք առողջությունը:		
XXIX շաբաթ	<<Հարգի՛ր, լսի՛ր և սիրի՛ր քո ծնողներին>> զրույց: Ինչպես կարելի է օգնել մեծերին:	15-19. 04	Դասվար
	<<Ինչ կանեի, եթե կախարդական փայտիկ ունենայի>>:		
XXX շաբաթ	<<Ո՛չ պատերազմին>>:	22-26. 04	Դասվար
	<<Հայրենիք>> երգի ուսուցում:		
XXXI շաբաթ	<<Մայիսի մեկը աշխատավորների տոնն է>> զրույց:	29-03. 05	Դասվար
XXXII շաբաթ	Մայիսի 9-ը՝ հաղթանակի տոն:	06-10. 05	Դասվար
XXXIII շաբաթ	Հեքիաթի աշխարհում: Հեքիաթի հերոսների բնութագրում (դրական և բացասական):	13-17. 05	Դասվար
	Ծնողական ժողով:		
	2023-2024 ուստարվա ամփոփում:		
XXXIV շաբաթ	<<Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդները>> զրույց:	20 -24. 05	Դասվար
	Բակային խաղեր և էքսկուրսիաներ:		
	Հաձնարարություններ ամառային արձակուրդների համար:		